5
ՕԳՈՍՏՈՍԻ
2019

Luys Lnyu®

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄՏԱՀՈԳԻՉ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....1
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ....1
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. 2
ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....4
ՀՀ-ՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....5
ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԱՃՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ....9
ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄՏԱՀՈԳԻՉ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ....9
ՀՀ ՍՊԱՌՄԱՆ ԱՃԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ....10
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ....11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական աճը երկրի տնտեսական զարգացածության չափման գործիքներից է: Սակայն միայն տնտեսական աճի առկայությունը բավարար չէ երկրի տնտեսական զարգացածության մասին խոսելու համար: Առավել կարևոր է այն, թե ինչի արդյունքում և ինչպես է ձևավորվել տնտեսական աճը: Տնտեսական աճի կառուցվածքը հնարավորություն է ընձեռում եզրակացնել տնտեսական աճի կայունության և երկրի տնտեսության հետագա զարգացման մասին: Այն դեպքերում, երբ տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է մեկ կամ երկու գործոններով կամ ձևավորվում է տնտեսության ոչ արտահանելի հատվածի զարգացածության արդյունքում, չենք կարող խոսել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի մասին: ՀՀ տնտեսական աճը այս տեսանկյունից ևս հատկանշական է, քանի որ հատկապես վերջին ժամանակահատվածներում տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի և բուքմեյքերական գործունեությամբ: Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ տնտեսական աճի կառուցվածքը և վեր հանել հիմնական պատճառները, որոնք տնտեսական աճի կայունությունը ՀՀ-ում դարձնում են մտահոգիչ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական աճը աղքատության կրճատման, բնակչության բարեկեցության մակարդակի և կյանքի որակի բարելավման, արտադրության ծավալների և ապրանքաշրջանառության ընդլայնման, ենթակառուցվածքների զարգացման ամենահզոր գործիքն է: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր երկրի պետական քաղաքականության կարևորագույն նպատակներից է տնտեսական աճի խթանումը, կայուն և օպտիմալ մակարդակում դրա տեմպերի ապահովումը: Տնտեսական աճ ասելով՝ հասկանում ենք համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական ծավալի աճը, որը նպաստում է ինչպես բնակչության եկամուտների աճին (աշխատավարձի, շահույթի, տոկոսի և վարձավճարի տեսքով), այնպես էլ պետական եկամուտների աճին (հարկերի, տուրքերի և այլ պետական վճարների տեսքով): Այսպիսով, տնտեսական աճի միջոցով ապահովվող բնակչության եկամուտների աճը նպաստում է կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացմանը, իսկ

պետական եկամուտների աճը՝ ենթակառուցվածքների զարգացմանն ու այլ հանրային բարիքների ստեղծմանը:

Սակայն, տնտեսական աճի միջոցով վերոհիշյալ արդյունքները երկարաժամկետ հատվածում հնարավոր է ապահովել, եթե տնտեսական աճն ունենա անհրաժեշտ որակը: Տնտեսական աճի որակը գնահատելու համար կարևոր են դրա երկու հիմնական հատկանիշները.

1. Տնտեսական աճի կառուցվածքը, որը ցույց է տալիս, թե ստեղծված հավելյալ ՀՆԱ-ն տնտեսության որ ճյուղերում է ստեղծվել:
2. Տնտեսական աճի ներառականությունը (Inclusiveness), որը ցույց է տալիս, թե արդյո՞ք բոլորը հավասարապես օգտվում են տնտեսական աճի արդյունքներից, թե այն կենտրոնանում է միայն որոշակի խմբերի մոտ:

Անդրադառնանք ՀՀ տնտեսական աճի կառուցվածքին և վեր հանենք այն միտումները, որոնք բացասաբար են նպաստում ՀՀ երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի ապահովմանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՀՀ-ում տնտեսական աճի տեմպերն ավելի բարձր են, քան տարածաշրջանի և ԵՄ երկրներում: ՀՀ տնտեսական աճը 2018թ. կազմել է 5.2 տոկոս, իսկ 2019թ. առաջին եռամսյակում՝ 7.1 տոկոս: Չնայած նրան, որ նկատվում է նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ տնտեսական աճի տեմպի դանդաղում (2017թ. աճը՝ 7.5 տոկոս, 2018թ. առաջին եռամսյակը՝ 10.2 տոկոս), այնուամենայնիվ աճը բավականին բարձր է տարածաշրջանի երկրների համեմատ (տե՛ս Գծապատկեր 1): Իհարկե, բարձր տնտեսական աճը կարելի է համարել ձեռքբերում, սակայն ԵՄ երկրների հետ համեմատելիս, պետք է նշել նաև, որ ՀՀ տնտեսական աճը բարձր է եղել ԵՄ երկրների միջին տնտեսական աճից նաև վերջին տարիներին: Ընդ որում, 2017թ. ՀՀ տարեկան տնտեսական աճը ԵՄ երկրների շարքում զիջել է միայն Իռլանդիայում գրանցված 8.1 տոկոս տնտեսական աճին:

Գծապատկեր 1. Տնտեսական աճը ՀՀ-ում և այլ երկրներում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, տոկոս[1]



Հենց այս տեղեկատվությունը հաշվի առնելով են ՀՀ գործող կառավարությունն ու վարչապետը բարձրաձայնում երկրի տնտեսական աճի մակարդակը՝ որպես ձեռքբերում: Սակայն այսպիսի համեմատությունները տեղին չեն, քանի որ տնտեսական աճը ՀՀ-ում և զարգացած երկրներում բավական տարբեր բնույթ ունեն: Ի տարբերություն ՀՀ-ի՝ նշված երկրները, ապահովելով ներառական տնտեսական աճ, գտնվում են բնակչության կենսամակարդակի, ենթակառուցվածքների և հանրային բարիքների զարգացածության շատ ավելի բարձր մակարդակում:

[1] Աղբյուրը՝ ՀՀ-ի և տարածաշրջանի երկրների համար՝ համապատասխան երկրների պաշտոնական վիճակագրություն, ԵՄ-ի համար՝ Եվրոստատ (https://ec.europa.eu/eurostat/data/database):

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արդյո՞ք բարձր տնտեսական աճն ապահովում է տնտեսական զարգացում, բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարելավում: Այս հարցերին պատասխանելու համար դիտարկենք վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի կառուցվածքը: 2017թ. տնտեսական աճին առավելապես նպաստում էր ծառայությունների ոլորտը, որն ապահովել էր 7.5 տոկոս տնտեսական աճից 3.1 տոկոսային կետը (առևտրի հետ միասին՝ 5.1 տոկոսային կետը): Սակայն, պետք է նկատել, որ արդյունաբերության նպաստումը եղել է 2.0 տոկոսային կետ: Նմանատիպ պատկեր է նաև 2018թ. առաջին եռամսյակում (տե՛ս Գծապատկեր 2): Դեռևս այդ ժամանակ կառավարությունը գիտակցում էր, որ անհրաժեշտ է կոնկրետ քայլեր ձեռնարկել տնտեսական աճի կառուցվածքի բարելավման ուղղությամբ՝ շեշտը դնելով մշակող արդյունաբերության զարգացման վրա և դարձնելով այն ՀՀ տնտեսության շարժիչ ուժը:

Գծապատկեր 2. ՀՀ իրական ՀՆԱ-ի աճը և ճյուղերի նպաստումները, տոկոսային կետ[2]



[2] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե և հեղինակի հաշվարկներ:

Սակայն, նոր կառավարության ձևավորումից՝ 2018թ. առաջին եռամսյակից հետո ՀՀ տնտեսական աճի կառուցվածքը ոչ միայն չի բարելավվել, այլև ավելի է վատթարացել: Այսպես, առաջին եռամսյակից հետո տնտեսական աճի տեմպը դանդաղել է՝ 10.2 տոկոսից տարեվերջին կազմելով 5.2 տոկոս, որից 3.7 տոկոսային կետը ապահովվել է ծառայությունների ոլորտը (առևտրի հետ միասին՝ 4.7 տոկոսային կետը), իսկ արդյունաբերության նպաստումը նվազել է՝ կազմելով 1.1 տոկոսային կետ: Այնուհետև, 2019թ. առաջին եռամսյակում գրանցվել է 7.1 տոկոս տնտեսական աճ, որը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է ծառայությունների աճով: Այսպես, 7.1 տոկոսից 1.3-ը ապահովվել է առևտրի աճի միջոցով, իսկ 4.4-ը՝ այլ ծառայությունների աճի միջոցով: Գրանցված 7.1 տոկոս տնտեսական աճին արդյունաբերությունը նպաստել է ընդամենը 0.1 տոկոսային կետով, շինարարությունը՝ 0.3 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսությունն ունեցել է զրոյական նպաստում: Սա այն պարագայում, երբ 2018թ. առաջին եռամսյակում գրանցված 10.2 տոկոս տնտեսական աճին, բացի 4.6 տոկոս ծառայությունների աճից, 2.0 տոկոսով նպաստել է արդյունաբերությունը, 1.6 տոկոսով՝ առևտուրը, 0.5 տոկոսով շինարարությունը:

ՀՀ-ՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ծառայությունների միջոցով աճը կարող է դիտվել դրական երևույթ, եթե այն ապահովվի հավելյալ արժեք ստեղծող ծառայությունների միջոցով: Սակայն, ինչպես երևում է Գծապատկեր 3-ից, ծառայությունների կառուցվածքում բավականին արագ աճում է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ոլորտի ծառայությունների կշիռը, որը 2018թ. 2017-ի նկատմամբ աճել է 2.6 տոկոսային կետով, իսկ 2019թ. առաջին եռամսյակում 2018-ի նկատմամբ աճել է 2.4 տոկոսային կետով (2018-ի առաջին եռամսյակի նկատմամբ՝ 4.2 տոկոսային կետով):

Գծապատկեր 3. Ծառայությունների կառուցվածքը[3], 2017-2019թթ., տոկոս



Փոխարենը 2018թ.-ին 2017-ի համեմատ 2.2 տոկոսային կետով նվազել է «Տեղեկատվություն և կապ» ոլորտի ծառայությունների կշիռը: 2019թ. առաջին եռամսյակում «Տեղեկատվություն և կապ» ոլորտի ծառայությունների կշիռը աճել է 2018-ի տարեկան ցուցանիշի նկատմամբ, սակայն 2018-ի առաջին եռամսյակի համեմատությամբ նվազել է 1.4 տոկոսային կետով: Այսինքն՝ SS ոլորտի զարգացման ջանքերը նույնպես նկատելի չեն: Աճել է նաև «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղի տեսակարար կշիռը, որը հիմնականում պայմանավորված է վարկերի աճով:

[3] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե և հեղինակի հաշվարկներ:

Աղյուսակ 1. Ծառայությունների աճը և ենթաճյուղերի նպաստումները աճին[4], տոկոսային կետ

	2018	2019 I եռ.
Ծառայությունների աճը, %	**18.8**	**17.3**
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	7.2	8.1
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	4.1	4.6
Կացության և հանրային սննդի կազմակերպում	2.5	1.4
Տեղեկատվություն և կապ	0.8	1.3
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	1.0	0.7
Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.8	0.3
Տրանսպորտ	1.5	0.2
Կրթություն	0.0	0.2
Մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	0.6	0.2
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0.3	0.1
Սպասարկման այլ ծառայություններ	0.2	0.0

Այսպիսով, 2019թ. իրական ՀՆԱ-ն աճում է հիմնականում ծառայությունների աճի շնորհիվ, իսկ ծառայություններն իրենց հերթին աճում են «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (17.3 տոկոս աճից 8.1 տոկոսային կետը) և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղերի (17.3 տոկոս աճից 4.6 տոկոսային կետը) հաշվին (տե՛ս Աղյուսակ 1): Խնդիրն այն է, որ այս ենթաճյուղերի կառուցվածքը նույնպես խնդրահարույց է:

Այսպես, «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղի աճը մեծ մասամբ պայմանավորված է սպառողական վարկերի աճով, որին դեռ կանդրադառնանք, իսկ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի կառուցվածքում մոտ 98 տոկոս կշիռ ունի «շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեությունը»: 2019թ. առաջին եռամսյակում «Մշակույթ, զվարճություններ և

[4] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե և հեղինակի հաշվարկներ:

հանգիստ» ենթաճյուղի 42.9 տոկոս աճը, գրեթե ամբողջությամբ՝ 42.6 տոկոսային կետով, պայմանավորված է հենց շահումով խաղերի աճով:

Ընդ որում, պետք է նկատել, որ մշակույթի, սպորտի և հանգստի տեսակարար կշիռները զգալի նվազել են (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ճյուղի կառուցվածքը[5]

	2018		2019 I եռ.	
	Կշիռը, %	Նպաստումը աճին, տ.կ.	Կշիռը, %	Նպաստումը աճին, տ.կ.
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ճյուղի աճը	**100.0**	**37.4**	**100.0**	**42.9**
այդ թվում՝				
Մշակույթ[6]	**0.9**	**0.2**	**0.6**	**0.1**
Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն	**97.2**	**36.7**	**97.8**	**42.6**
այդ թվում՝				
խաղատների գործունեություն	19.6	2.9	20.9	6.1
դրամական շահումով խաղային ավտոմատների	0.0	-0.2	0.1	0.1
վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեյքերական գործունեության կազմակերպում	80.4	34.1	79.1	36.5
վիճակագրական շեղում	-	-0.1	-	-0.1
Սպորտ, զվարճություններ և հանգստ	**1.9**	**0.4**	**1.5**	**0.2**

Այսպիսով, ՀՀ-ում գրանցված բարձր տնտեսական աճը պայմանավորված է հասարակության կողմից շահումով խաղերից ավելի շատ օգտվելու հանգամանքից: Ստացվում է, որ կառավարությունն անընդհատ խոստանում է տնտեսության կառուցվածքը բարելավել, խթանել արտահանելի և բարձր ավելացված արժեք ունեցող ճյուղերը, մինչդեռ փաստացի պատկերը չի արտացոլում որևէ դրական տեղաշարժ: Ավելին, պատկերը գնալով վատթարանում է:

[5] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե և հեղինակի հաշվարկներ:
[6] Ստեղծագործական, արվեստի և հանդիսավոր ներկայացումների, գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեություն:

Շահումով խաղերի աճով պայմանավորված տնտեսական աճ

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ տնտեսության համար անհրաժեշտ է ապահովել բարձր տնտեսական աճ, որպեսզի հնարավոր լինի կրճատել աղքատությունը, բարձրացնել բարեկեցության մակարդակը և կյանքի որակը, ապահովել ենթակառուցվածքների շարունակական զարգացում: Ներկայումս ՀՀ-ում գրանցված նման «որակի» տնտեսական աճով այս նպատակներին չենք կարող հասնել:

Շահումով խաղերի, վիճակախաղերի, խաղատների և նման այլ գործունեությունները մակրո մակարդակում հանգեցնում են եկամուտների վերաբաշխմանը ցածր եկամուտ ունեցողներից դեպի հարուստներ: Սա իհարկե խորացնում է աղքատությունը և սոցիալական անհավասարությունը: Բայցի այդ, այս ոլորտի աճը չի նպաստում հարկային եկամուտների աճին, քանի որ կազմակերպություններն աշխատում են արտոնագրային հարկի ռեժիմում, ինչը նշանակում է, որ նրանց կողմից վճարվող հարկերի չափը կապված չէ շահույթի կամ շրջանառության ծավալների հետ: Այս ոլորտի աճը չի նպաստում բնակչության եկամուտների աճին: Ավելին, այս ոլորտը արտահանելի չէ, հիմնված է ներքին պահանջարկի վրա: Այսինքն՝ չի նպաստում արտերկրից արտարժույթի ներհոսքին և անկայուն է, քանի որ ներքին պահանջարկի տատանումները կհանգեցնեն այս ճյուղի աճի տատանողականության աճին, հետևաբար՝ նաև տնտեսական աճի անկայունությանը:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄՏԱՀՈԳԻՉ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայտնի է, որ տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ պայման է ներդրումների իրականացումը: Տնտեսական աճը ենթադրում է արտադրանքի ծավալի ավելացում, հետևաբար՝ հավելյալ արտադրանք ստեղծելու նպատակով ներդրումների առկայություն: Սակայն 2018թ. առաջին եռամսյակի բարձր աճից հետո ներդրումների աճի տեմպը դանդաղում է: 2019թ. համախառն ներդրումները կրճատվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 16.6 տոկոսով:

Այսպես, եթե նախորդ տարի տնտեսական աճը մեծ մասամբ պայմանավորված էր ներդրումների աճով, ապա 2019թ. առաջին եռամսյակում տնտեսական աճը պայմանավորվել է միայն սպառման աճով: Ընդ որում, ներդրումների նպաստումը եղել է

բացասական՝ 2.8 տոկոսային կետ: Բացասական է նպաստել նաև զուտ արտահանումը՝ -1.9 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է արտահանման ծավալների կրճատմամբ:

Գծապատկեր 4. ՀՆԱ-ի իրական աճը և ամբողջական պահանջարկի տարրերի նպաստումները, 2018 - 2019թթ., տոկոս



Այսինքն, եթե ՀՆԱ-ն աճում է միայն սպառման հաշվին, իսկ ներդրումները նվազում են, ապա դա նշանակում է, որ ապագայում ոչ մի հիմք չկա բարձր տնտեսական աճ ակնկալելու:

ՀՀ ՍՊԱՌՄԱՆ ԱՃԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

2018թ. ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա եղել է խիստ զսպող: ՀՀ կենտրոնական բանկն այս վարքագիծը հաշվի առնելով և դեֆլյացիոն վտանգներ զգալով՝ դեռևս 2018-ի հուլիսից սկսեց ռեպո գործիքի միջոցով լիկվիդայնություն ներարկել տնտեսության մեջ[7]: Վերջնականապես այս լիկվիդայնության ներարկումը բանկային համակարգ՝ տնտեսության մեջ հայտնվեց վարկերի տեսքով, ընդ որում հիմնականում տնային տնտեսությունների համար սպառողական և հիպոթեքային վարկավորման ձևով[8]: Արդյունքում 2019թ. առաջին եռամսյակում ականատես եղանք մասնավոր սպառման

[7] 2019թ. ապրիլի դրությամբ ռեպո գործիքի ներքո բանկային համակարգ ներարկված լիկվիդայնությունը հասավ 260 մլրդ դրամի, որն աննախադեպ է:
[8] 2018թ. և 2019-ի ապրիլին սպառողական վարկերի 12-ամսյա աճը կազմել է համապատասխանաբար 37.1 տոկոս և 39.6 տոկոս, իսկ հիպոթեքային վարկավորման ծավալը՝ 22.1 տոկոս և 30.8 տոկոս:

արագացող աճի, ինչն էլ թղթակցվեց ոչ արտահանելի հատվածի հաշվին տնտեսական աճի հետ: Ակնհայտ է, որ վարկերի տեսքով բնակչության սպառման ֆինանսավորումը շատ ավելի վտանգավոր է, քան եթե այդ նույն լիկվիդայնությունը հայտնվեր բնակչության մոտ բյուջետային ծախսերի միջոցով, որովհետև վարկերը ենթակա են վերադարձման: Ընդ որում, տնային տնտեսությունների եկամուտները չեն աճում վարկերի աճին համահունչ[9], հետևաբար առաջիկայում կարող է խնդիր առաջանալ վարկերի սպասարկման հետ: Եվ եթե տնտեսական այսպիսի քաղաքականությունը շարունակվի 2019-ի ամբողջ տարվա ընթացքում ևս[10], բացի այն, որ երկարաժամկետ տնտեսական աճը վտանգված կլինի, որովհետև վարկերն անվերջ չեն կարող աճել, այլ նաև դա կարող է հանգեցնել բանկերի վարկային պորտֆելների որակի վատացմանը: Ի դեպ, ըստ լրատվական դաշտում հրապարակված տեղեկատվության, ընդամենը 2019թ. առաջին հինգ ամսվա ընթացքում բանկերի ժամկետանց վարկերը ավելացել են շուրջ 21 մլրդ դրամով՝ անցնելով 109 միլիարդից՝ այն պարագայում, երբ 2018թ. նոր կառավարության հայտարարած համաներման արդյունքում ֆիզիկական անձանց տրամադրված անհուսալի ճանաչված վարկերի գծով ներված տույժ ու տուգանքների գումարը գերազանցել է 12 մլրդ դրամը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Վերջերս հաստատված 2020-2022թթ. Միջնաժամկետ ծախսերի ծրագրով ամրագրվել է, որ կառավարությունը 2019-ից 2022 թվականը սպասում է բավականին համեստ տնտեսական աճի տեմպեր՝ համապատասխանաբար 5.4 տոկոս, 4.9 տոկոս, 5.0 տոկոս և 5.1 տոկոս: Ընդ որում, նշվում է, որ ներկայումս տնտեսական աճի երկարաժամկետ պոտենցիալ մակարդակը 4.5 տոկոսի շրջանում է և 5.0 տոկոսի հասնելու համար անհրաժեշտ են հավելյալ ջանքեր: Սակայն, ներդրումների նման ցածր մակարդակում ոչ միայն վտանգվում է ներուժային աճի բարձրացումը, այլև կարող է լինել ներուժային աճի անկում:

9 Միջին աշխատավարձի աճը 2019թ. առաջին եռամսյակում եղել է համեստ՝ 4.3 տոկոս, օտարերկրյա դրամական փոխանցումները նվազել են 5.5 տոկոսով:

10 2019թ. առաջին չորս ամիսների ընթացքում հիշյալ խնդիրն ավելի է խորացել, քանի որ բյուջեն եղել է 78.6 մլրդ դրամ հավելուրդով՝ հակառակ ծրագրված պակասուրդի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական աճի կառուցվածքը վերլուծելուց հետո գալիս ենք այն եզրակացության, որ **ՀՀ-ում բարձր տնտեսական աճն իր կառուցվածքի տեսանկյունից չունի բարձր որակ:**

Ոչ արտահանելի հատվածը շարունակում է իր դիրքերն ամրապնդել որպես տնտեսական աճի շարժիչ ուժ, այսինքն՝ տնտեսական աճը հիմնված է ներքին պահանջարկի վրա, ընդ որում ֆինանսավորվում է վարկերի հաշվին: Սա մտահոգիչ է, քանի որ, ոչ արտահանելի հատվածը աճում է ավելի արագ, քան արտահանելի հատվածը՝ վտանգելով երկարաժամկետ տնտեսական աճի կայունությունը: Պետք է հաշվի առնել նաև, որ 2018թ. պետական բյուջեի ծախսերի թերակատարման արդյունքում արդեն խնդիրներ են ստեղծվել ամբողջական պահանջարկի հետ կապված, որն արտացոլվում է ցածր գնաճի ցուցանիշում, հետևաբար 2019թ. պետական բյուջեի նույն վարքագծի շարունակումը կվտանգի երկարաժամկետ տնտեսական աճը: Ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ. առաջին եռամսյակում տնտեսական աճը մեծամասամբ պայմանավորված է եղել ծառայությունների աճով (2018թ. 5.2 տոկոս տնտեսական աճի 4.8-ը, իսկ 2019թ. առաջին եռամսյակում՝ 7.1 տոկոսից 5.7-ը պայմանավորված էր ծառայությունների աճով): Ծառայությունների աճն իր հերթին մեծ մասամբ պայմանավորված է մշակույթ, զվարճություններ և հանգիստ, ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով, որոնք ոչ արտահանելի ճյուղեր են և հիմնված են ներքին պահանջարկի վրա: Ընդ որում, հատկանշական է, որ արտահանելի հատվածի արդյունաբերության ոլորտը նվազում է ապրել, և ներկայումս տեսանելի չեն վերջինիս զարգացմանն ուղղված քայլերը:

Պահանջարկի տեսանկյունից ՀՆԱ-ի աճի կառուցվածքը նույնպես մտահոգիչ է: Աճը ապահովվել է միայն սպառման հաշվին, իսկ ներդրումներն ու զուտ արտահանումն ունեն բացասական նպաստում: Սակայն հարց է առաջանում՝ ինչի՞ հաշվին է աճում սպառումը: Տնային տնտեսությունների եկամտի խոշոր տարրերից են՝ աշխատավարձը, օտարերկրյա դրամական փոխանցումները: Աշխատավարձի աճը 2019թ. առաջին եռամսյակում եղել է

համեստ՝ 4.3 տոկոս, օտարերկրյա դրամական փոխանցումները նվազել են 5.5 տոկոսով[11]: Ստացվում է, որ սպառումը ֆինանսավորվել է հիմնականում սպառողական վարկերի հաշվին:

Սակայն, հաշվի առնելով այն, որ եկամուտները չեն աճում վարկերին համահունչ, կարող ենք նշել, որ առաջիկայում կարող է խնդիր առաջանալ անընդհատ աճող վարկերը սպասարկելու հետ կապված, ինչն էլ կհանգեցնի տնտեսական աճի կտրուկ անկմանը, քանի որ աճ ապահովող հիմնական ճյուղերը կդադարեն աճել:

Այն խոստումները, որ Հայաստանը պետք է վերածվի բարձրտեխնոլոգիական երկրի, և տեխնոլոգիաները պետք է դառնան Հայաստանի տնտեսության շարժիչ ուժը, կարծես թե չեն իրականանում, քանի որ տնտեսության շարժիչ ուժը մնում են «վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլախաղերի և բուքմեյքերական գործունեության կազմակերպում» և «խաղատների գործունեություն» ճյուղերը: Փաստացիորեն ստացվում է, որ ձևավորված տնտեսական աճը պայմանավորված է բնակչության՝ խաղատներում ծախսած գումարներով և որևէ կերպ չի նպաստում բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը և կյանքի որակի բարելավմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*

[11] Դրամական փոխանցումների (ոչ առևտրային բնույթի) կուտակային զուտ ներհոսքի փոփոխություն, աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: